շաբաթէ ի շաբաթ, զմի մի փարայ տանուտէրն և ընտանիք նորա, որք կարօղքն են։ Զայս յառաջ ևս հրամայեալ է իմ ձեզ, ասէ, և այժմ վերստին հրամայեմ ձեզ առնել այսպէս, զի ունիմ զբարի դիտաւորութիւն իմ։ Իսկ դիտաւորութիւն նորա է առնել զգումար դրամոց (իբր դատապէլայ սնտուկն), զի եթէ պիտոյ լիցի վասն ուղղափառ հաւատոյ առնել ծախս ինչ, առձեռն պատրաստ գտցի։ Եւ զկնի ետ ստորագրել քահանայից զթուղթ մի, յորում հաստատեալ են զԺԲ եղբարս լինել իշխան ուղղափառաց. վասն այսր, զի եթէ հանդիպեսցի տաւա ինչ վասն ուղղափառաց, և մանաւանդ վասն ուղղափառ կարգաւորաց, սոքա յարուցեալք ջատագովեսցեն զնոսա աստ և անդ ի յատեանս։ Այնպէս և ի լինել դիպուածոյ իրիք վասն ուղղափառաց, սոքա հոգալոց են։ Եւ այս ԺԲ իշխանքն ստորագրեալ են ի միում թղթի. և զայն թուղթ պահեալ է առ իւր Աթանաս վարդապետն։

Ցաւուրս յայսոսիկ կոչեաց պատրիարգն զոմանս ի վերոգրեալ իշխանացն, և ասէ. լուայ թէ ԺԲ անձինք ի ձէնջ միաբանեալ են և ստորագրեալ, զի ծառայելով ի գրունս մեծամեծաց, կամին զաթանաս վարդապետն առնել պատրիարգ փոխանակ իմ։ Արդ՝ այս այսպէս է՞, թէ այլապէս։ Պատասխանի տուեալ են. հայր վարդապետ, այո՛ միաբանեալ եմք և ստորագրեալք. սակայն ոչ վասն այգր պատճառի, այլ՝ վասն այս ինչ և այն ինչ պատճառի. մանաւանդ զի միաբանեալ եմք ի գրել ի Հռոմ, և տալ նիզամ այսմ բանի, այսինքն թէ հայոց ժամ մի երթայք (քանզի ընդ այս բանի և պատրիարգն յոյժ դժուարացեալ է)։...

Ապա ոմանք ԺԲ իշխանացն իբր Ե անձինք, չոգան առ Աթանաս եպիսկոպոսն, և խնդրեցին զթուղթն յորում ինքեանք ստորագրեալ էին. տեսանել թէ որպիսի կերպիւ գրեալ է։ Իսկ Աթան. եպիսկոպոսն ի սկզբան ոչ կամեցաւ տալ, սակայն ապա ետ։ Զոր ընթերցեալ, ասեն. այս թուղթ յորժամ անկցի ի ձեռս պատրիարգին, կամ գանգատեսցեն զմէնջ առ եպարքոսն, յայնժամ մեզ վնաս լինի. զի գրեալ կան ի սմա բանք ինչ որոգայթաւորք։ Եւ ապա պատառեցին զնոյն թուղթն։...

1768 ի յունիսի 10 Ն. Ս. Հ. Յակոբոս վրդպ. Զամչեանց Մխիթարեան
[Կ. Պոլիս]

ՄՁ.

Գերյ. Մելգոնեան Աբրահոր օրհնութեան օծուն մէկ նամակը առ երևելին Տիւզեան Միքայէլ աղա, որ ի նշան սիրոյ և բարեկամութեան Ուխտիս՝ նուիրեր էր վանքիս եկեղեցւոյն երկու արծաթաձոյլ բազմաստեղն աշտանակներ։

Ի

Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ Ստեփաննոս վարդապետ Մելքոնեան՝ առաջնորդ համակրօն ուխտի միանձանց հայոց Մխիթարեանց. բարեպաշտօն և ազնուական մտերմին ի Քրիստոս՝ Միքայէլի աղայի ուղղաբերձեան [Տիւզօղլու], ողջոյն քրիստոսաւանդ, հանդերձ երկնառաք օրհնութեամբ ի յաստուածընկալ սուրբ նշանէն, ի յաստուածածին ամբիծ Կուսէն, ի սրբոց առաքելոցն գնդից, և յամենայն երկնագումար խմբից, տնտեսութեամբ հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի, և որոց սոցուն սակի են։

Զքեզ ծանեայ՝ ի հարուստ ամանակաց սերտեալ ի բարեպաշտութիւն, և աստուածակոյս կոչմանն նախանձայոյզ, արդարութեան հանդիսին ստածիչ. լուսոյ ճշմարտութեան արծարծիչ. մղտոյ խաբէութեան փարատիչ. որում ի ճահ պատահեցուցեր չահարկու լինել եկեղեցւոյն քրիստոսի՝ միջնորդաւ գործոյ արծաթաձողի՝ կրկին ճրագաց բազմաստեղն աշտանակաց՝ գործելոց քերուբ. ընծայեալ զնոյն եռանդեամբ կամաց բարեմոյն